# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«____»_____ 2025թ.** **N_____-Ա**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

**Երևանի քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Վերահսկողության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| Հ/Հ | Վերահսկողության վարչություն | Հաստիքների քանակը | Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը | Հավելում | Ընդամենը ամսական աշխատավարձը |
|---|---|---|---|---|---|
| 1 | վարչության պետ | 1 | 697,000 | | 697,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | վարչության պետի տեղակալ | 2 | 561,000 | | 1,122,000 |
| 3 | գլխավոր մասնագետ | 2 | 323,000 | | 646,000 |
| 4 | առաջատար մասնագետ | 2 | 289,000 | | 578,000 |
| 5 | խորհրդատու | 3 | 408,000 | | 1,224,000 |
| 6 | գործավար | 1 | 248,200 | | 248,200 |
| - | **Մոնիթորինգի և վերլուծության բաժին** | | | | |
| 7 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 8 | խորհրդատու | 1 | 339,000 | | 339,000 |
| 9 | գլխավոր մասնագետ | 3 | 289,000 | | 867,000 |
| 10 | առաջատար մասնագետ | 6 | 282,200 | | 1,693,200 |
| - | **Որակի վերահսկողության բաժին** | | | | |
| 11 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 12 | Խորհրդատու | 1 | 339,000 | | 339,000 |
| 13 | գլխավոր մասնագետ | 2 | 289,000 | | 578,000 |
| 14 | առաջատար մասնագետ | 5 | 282,200 | | 1,411,000 |
| - | **Ներքին անվտանգության բաժին** | | | | |
| 15 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 16 | խորհրդատու | 1 | 339,000 | | 339,000 |
| 17 | գլխավոր մասնագետ | 6 | 289,000 | | 1,734,000 |
| 18 | առաջատար մասնագետ | 5 | 282,200 | | 1,411,000 |
| - | **Ուսումնասիրությունների կատարման թիվ 1 բաժին** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 19 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 20 | գլխավոր մասնագետ | 3 | 289,000 | | 867,000 |
| 21 | առաջատար մասնագետ | 3 | 282,200 | | 846,600 |
| - | **Ուսումնասիրությունների կատարման թիվ 2 բաժին** | | | | |
| 22 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 23 | գլխավոր մասնագետ | 3 | 289,000 | | 867,000 |
| 24 | առաջատար մասնագետ | 3 | 282,200 | | 846,600 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **58** | | | **18, 693,600** |

»,

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «790.0» թվերը փոխարինել «264,597,845» թվերով, «825.0» թվերը փոխարինել «275,651,645» թվերով,

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2336.0» թվերը փոխարինել «2371.0» թվերով, «698,061,245» թվերը փոխարինել «709,115,045» թվերով:

2. Սույն որոշումը համայնքային ծառայության պաշտոնների մասով ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևանի քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Երևանի քաղաքապետարանի համակարգը ներառում է աշխատակազմը՝ բաղկացած 29 ստորաբաժանումներից, 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը և թվով 452 կազմակերպություններ (առևտրային, ոչ առևտրային, հիմնարկ):

Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գործող կանոնադրության՝ վերջինիս մասով սահմանված են վերահսկողական բնույթի մի շարք գործառույթներ և որոնց իրականացման համար ներկայումս առկա է թվով 23 հաստիքային միավոր, ինչը բավարար չէ համակարգում մեծ ծավալով բազմաբնույթ ուսումնասիրությունների և Երևանի քաղաքապետին վերապահված լիազորությունների վերահսկողության իրականացման, դրանց արդյունքների վերլուծության, առկա խնդիրների վերհանման և բարելավման ուղղությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման համար:

Վերահսկողական գործառույթների արդյունավետ իրականացման արդյունքում բարձրացվելու է համայնքի բնակիչներին մատուցվող ծառայությունների, համայնքում կատարվող աշխատանքների, համայնքին մատուցվող ծառայությունների որակը, հնարավոր է լինելու բարձրացնել աշխատակազմի և ենթակայության կազմակերպությունների արդյունավետությունը, ապահովել ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը: Որպես Վարչության ընդհանուր գործունեության առաջնահերթություն՝ նախատեսվում է համայնքի եկամուտների, ծախսերի, ինչպես նաև այլ գործառույթների արդյունավետության բարձրացման համար ուսումնասիրությունների կատարումը, առաջարկությունների ներկայացումը և առկա խնդիրների վերացման, հակաիրավական գործողությունների կանխարգելման համար միջոցառումների իրականացումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Երևանի քաղաքապետի կողմից Վարչության առջև դրված խնդիրների ծավալն ու դրանք ընդգրկող շրջանակները՝ ներկայացված նախագծով առաջարկում ենք վերահսկողության Վարչության կազմում նախատեսել թվով 5 բաժիններ, իսկ Վարչությունը ընդհանուր բաղկացած է լինելու 58 աշխատակցից:

Երևան քաղաքում վերջին տարիներին զգալիորեն աճել է թվային կառավարման գործիքների, տեսադիտարկման համակարգերի և թվային աղբուրներից ստացվող տվյալների հավաքագրման ծավալը: Այսօր մեր կառավարման համակարգում ներառված են ավելի քան 10.000 տեսախցիկներ և շուրջ 50 թվային հարթակներ: Ստացված տվյալները ներկայումս հավաքվում և օգտագործվում են հիմնականում տարանջատված, առկա չէ միասնական կառավարման հարթակ և հետևաբար չի իրականացվում տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվությունների համադրմամբ խորքային վերլուծություն:

Վարչության «Մոնիթորինգի և վերլուծության» բաժինը իր գործառույթների շրջանակում պետք է ստանա, մշակի և վերլուծի տեղեկատվություն՝ ներքին էլեկտրոնային շտեմարաններից, տեսահսկման համակարգերից, տարբեր նշանակության սենսորներից, տեղեկատվության բաց և այլ աղբյուրներից, ապահովելով քաղաքապետարանի վերահսկողական, կանխիչ և իրավախախտումների բացահայտման գործընթացների համակարգված և արդյունավետ կազմակերպումը: Միաժամանակ բաժինը պետք է իրականացնի ուսումնասիրություն տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների բոլոր բնագավառներում, կատարելով՝ պարտավորությունների, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների, իրավախախտումների դեմ մղվող պայքարի և այլ տեղեկատվության հավաքագրում: Արդյունքում՝ վերլուծելով կառուցակարգերում առկա բացթողումները և խնդիրները, բաժինը պետք է ներկայացնի առաջարկություններ դրանց հետևանքների վերացման և հետագայում նման դեպքերի կանխարգելման համար: Որակի հսկողության բաժինը իրականացնելու է համայնքին և ենթակայության կազմակերպություններին մատուցվող ծառայությունների և համայնքի պատվերով կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ վերահսկողություն՝ չափագրումներ կատարելով, փորձանմուշներ վերցնելով (փորձաքննության ներկայացնելու համար), ժամկետների պահպանման համար ձեռնարկելու համապատասխան միջոցներ և այլն: Ներքին անվտանգության բաժնի կողմից կատարվելու են աշխատանքներ իրավախախտումների և օրենքով արգելված գործողությունների կատարման բացահայտման և կանխարգելման ուղությամբ, աշխատակազմի և ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին հակահրավական

գործունեության մեջ ներքաշելուն հակազդող աշխատանքներ, ինչպես նաև հակաիրավական գործողությունների կատարման ռիսկերի գնահատում և դրանց հակազդելու համար առաջարկությունների ներկայացման աշխատանքներ: Ուսումնասիրությունների կատարման համար առաջարկվել է նախատեսել երկու բաժիններ հաշվի առնելով, ստորաբաժանումների և կազմակերպությունների ընդհանուր քանակը շուրջ 500 միավոր և այն, որ վերահսկողության ենթակա է շուրջ 33.000 աշխատակիցների կողմից կատարվող աշխատանք: Նշված բաժինները փաստաթղթային և տեղատեսությունների միջոցով իրականացնելու են տարբեր ստորաբաժանումների և ենթակա կազմակերպությունների գործունեության վերահսկողություն ուսումնասիրելով դրանց համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին: Վարչության կազմում ուսումնասիրությունների կատարման բաժինների ստեղծումը հնարավորություն կտա Վարչության աշխատանքները կազմակերպել ոչ թե մեկ այլև մի քանի խմբերով և ուղղություններով՝ առավել օպտիմալ օգտագործելով աշխատաժամանակը և էականորեն լավարկել աշխատանքի արդյունավետությունը: Այն հնարավորություն կտա նաև Վարչության աշխատանքներում ներգրավել բարձր որակավորում ունեցող մասնագետների, նպաստելով Վարչության կանոնադրական խնդիրների իրականացմանը:

Միաժամանակ հաշվի առնելով, որ Վարչությունը վերահսկողություն է իրականացնելու տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված բոլոր բնագավառներում, Վարչության և որոշ բաժինների կազմում առաջարկվում է նախատեսել խորհրդատուների և որևէ բաժնում չներառված մասնագետների հաստիքներ, որոնց միջոցով տվյալ պահին կատարվող ուսումնասիրություններին համապատասխան, ըստ անհրաժեշտության, ներգրավվելու են հատուկ մասնագիտական գիտելիքներ կամ որակավորումներ ունեցող անձինք՝ ֆինանսիստ, հաշվապահ, գնումների մասնագետ, իրավաբան, բժիշկ, ճարտարապետ, մանկավարժ, տրանսպորտի բնագավառի մասնագետ, փորձագետ և այլն, իսկ առաջարկվող կառուցվածքով Վարչության արդյունավետ կառավարման նպատակով առաջարկվում է նախատեսել Վարչության պետի տեղակալի մեկ նոր հաստիք, որը հնարավորություն կտա իրականացնելու աշխատանքի ավելի արդյունավետ բաժանում և ծանրաբեռնվածության որոշակի դիվերսիֆիկացում՝ նպաստելով կատարվող աշխատանքների արտադրողականության բարձրացմանը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**